Ապահովագրություն

ფინედუ

საქართველოს ეროვნული ბანკი
National Bank of Georgia

BTU BUSINESS & TECHNOLOGY UNIVERSITY

საქართველოს პრეზიდენტის სარეზერვო ფონდი

մարտ **2024**

В поԱռօրյա կյանքում ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են բախվել մի շարք չնախատեսված իրադարձությունների հետ, որոնք կարող են նրանց ֆինանսական վնաս հասցնել: Հենց նման անկանխատեսելի իրադարձությունների դեպքում և ռիսկերի հաղթահարման հարցում նրանց օգնում է ապահովագրությունը:

Ապահովագրությունը ֆինանսական գործիք է, որն օգնում է խուսափել կամ նվազեցնել հնարավոր ռիսկերի հետևանքով առաջացած ֆինանսական կորուստները: Ապահովագրական գործունեության հիմնական սկզբունքը հետևյալն է. ապահովագրողը (ապահովագրական կազմակերպությունը) ապահովագրում է ֆիզիկական և իրավաբանական անձանց այն ռիսկերից, որոնց նրանք կարող են հանդիպել և նրանց տրամադրում է ապահովագրական վկայագիր և պայմանագիր, որը սահմանում է ապահովագրության պայմանները:

Ապահովագրություն ձեռք բերելու համար ապահովագրված անձինք նախապես համաձայնեցված պարբերականությամբ ապահովագրական կազմակերպությանը վճարում են ապահովագրավճարը, այսինքն՝ դրամական ներդրումը:

УԱպահովագրված դեպքի պատահման դեպքում, այսինքն՝ նախապես որոշված ռիսկերը տեղի ունենալու դեպքում, ապահովագրական կազմակերպությունը ապահովագրված անձանց կփոխհատուցի վնասը պայմանագրի պայմանների և ապահովագրական սահմանաչափի համաձայն: Ապահովագրության սահմանաչափը նախապես որոշվում և նշվում է ապահովագրական վկայագրի մեջ:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ծախսերը ավտոմատ կերպով չեն փոխհատուցվում, և ապահովագրված անձը պետք է դիմի ապահովագրական կազմակերպությանը այդ պահանջով: Ապահովագրական վկայագիրը կարող է նախատեսել ֆրանշիզա: Ֆրանշիզան կարող է լինել պայմանական կամ անվերապահ: Վկայագիրը կարող է ներառել նաև զրոյական ֆրանշիզա: Իր հերթին, ֆրանշիզան իրենից ներկայացնում է վնասի նվազագույն չափը, որը ապահովագրողը չի փոխհատուցի:

Ապահովագրությունը կարող է լինել կամավոր կամ պարտադիր:

Ի տարբերություն պարտադիր ապահովագրության, որտեղ ներգրավվածության պայմանները սովորաբար սահմանվում են օրենքով, կամավոր ապահովագրության մեջ ներգրավումը կամավոր է և կախված է ապահովագրվողի կամքից:

Ըստ այդմ, ապահովագրության պայմանագիրը կնքվում է կողմերի համաձայնության հիման վրա: Առանձնացնում են ապահովագրության երեք հիմնական ուղղություն՝ անձնական, գույքի և պատասխանատվության ապահովագրություն:

Անձնական ապահովագրություն

Անձնական ապահովագրության հիմնական տեսակներն են առողջության, ճանապարհորդության և կյանքի ապահովագրությունը:

Մեզանից յուրաքանչյուրը կարող է կանգնել առողջության վատթարացման վտանգի առաջ, իսկ բժշկական ծառայություններն ու դեղամիջոցները, շատ դեպքերում, թանկ են: Առողջության ապահովագրությունը թույլ է տալիս նման դեպքերում նվազեցնել կամ ամբողջությամբ խուսափել բժշկական ծախսերից: Բացի այդ, առողջության ապահովագրությունն օգնում է մեզ ապահովել, որ մեր առողջական վիճակը երկարաժամկետ բացասական ազդեցություն չունենա մեր և մեր ընտանիքի ֆինանսական բարեկեցության վրա:

Առողջության ապահովագրությունը կարող է լինել ինչպես մասնավոր, այնպես էլ պետական (այս դեպքում պետությունը փոխհատուցում է շահառուի բժշկական օգնության ծախսերը):

Աշխարհում կան բազմաթիվ առողջապահական համակարգեր, և շատ դեպքերում հանդիպում են մասնավոր և պետական ապահովագրության տարբեր համակցություններ:

Վրաստանում 2013 թվականից գործում է համընդհանուր առողջապահության պետական ծրագիրը, որի նպատակն է ապահովել բժշկական ծառայությունների հասանելիությունը բնակչության համար:

Ճամփորդության ապահովագրությունը ծածկում է ճանապարհորդելու հետ կապված ռիսկերը, ինչպիսիք են, օրինակ՝ բժշկական օգնության կամ ճանապարհորդության չեղարկման, կորցրած ուղեբեռի և այլ չնախատեսված իրադարձությունների հետ կապված ծախսեր. հետևաբար, ապահովագրության այս տեսակը շատ գործնական և տարածված է:

Կյանքի ապահովագրությունը հիմնականում ապահովում է ապահովագրված անձի մահվան դեպքում դրամական փոխհատուցում նրա ընտանիքին կամ ժառանգորդին:

Խարհում տարածված են կյանքի ապահովագրության բազմաթիվ տեսակներ: Կյանքի ապահովագրությունը կարող է կապված չլինել մահվան ռիսկի հետ (օրինակ, ապահովագրական փոխհատուցումը կարող է վճարվել, երբ դուք հասնում եք որոշակի տարիքի): Որպես կանոն, կյանքի ապահովագրության տեսակները երկարաժամկետ են: Հարկ է նշել, որ Վրաստանում ապահովագրական կազմակերպությունների կողմից կյանքի կարճաժամկետ ապահովագրության և առողջության ապահովագրության միացումը ընդունված պրակտիկա է:

Գույքի ապահովագրություն

Գույքի ապահովագրությունը թույլ է տալիս խուսափել մեր անշարժ կամ շարժական գույքին սպառնացող ռիսկերի հետ կապված ծախսերից: Գոյություն ունեն գույքի ապահովագրության մի քանի տեսակներ, և դրանք հնարավոր է խմբավորել հետևյալ կերպ.

1. Գյուղատնտեսական ապահովագրությունը (ագրո-ապահովագրություն) կարող է ներառել գյուղատնտեսական

գյուղատնտեսական մշակաբույսերի, կենդանիների, թռչունների, ձկների և գյուղատնտեսական ձեռնարկությունների այլ գույքի ապահովագրություն:

Գյուղատնտեսական ապահովագրությունը լավ միջոց է պաշտպանվելու գյուղատնտեսական այնպիսի ռիսկերից, ինչպիսիք են բնական աղետները (ներառյալ՝ կարկուտ, հրդեհ, ջրհեղեղ, երաշտ և այլն) կամ կրծողների և միջատների կողմից գյուղատնտեսական կուլտուրաների վնասումը:

2. Տրանսպորտի ապահովագրությունը ներառում է տրանսպորտային միջոցների (օրինակ՝ ավտոմեքենաների, նավերի և ինքնաթիռների) ապահովագրությունը և նվազագույնի է հասցնում ավտովթարի հետ կապված չնախատեսված ֆինանսական ծախսերը:

3. Գույքի ապահովագրության այլ տեսակներ. ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են ապահովագրել իրենց սեփական կամ բիզնեսի գույքը (օրինակ՝ բնակելի կամ գրասենյակային շենքեր, մեքենաներ, ընտանի կենդանիներ, կահույք, թանկարժեք իրեր) տարբեր ռիսկերից, ինչպիսիք են՝ գողությունը, կողոպուտը, վանդալիզմը, բնական աղետները և այլն: Հիշեք, որ ապահովագրությունը չի փոխհատուցում ժամանակի ընթացքում գույքի մաշվածությունից հասցված վնասը:

ապահովագրությունը չի փոխհատուցում ժամանակի ընթացքում գույքի մաշվածությունից հասցված վնասը:

Պատասխանատվության
 Ապահովագրություն

Պատասխանատվության ապահովագրությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց հնարավորություն է տալիս խուսափել ֆինանսական կորուստներից՝ կապված իրենց գործունեության հետևանքով երրորդ անձի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հատուցման հետ: Երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրությունը կարող է ներառել.մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն, որը պաշտպանում է ապահովագրված անձանց այնպիսի դեպքերից, երբ նրանք իրենց մասնագիտական գործունեության ընթացքում ակամայից վնաս են հասցնում երրորդ անձանց: Մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը հաճախ

օգտագործվում է բժիշկների, աուդիտորների, ճարտարապետների և այլ մասնագետների կողմից: Օրինակ՝ Վրաստանում նոտարների մեծ մասն օգտվում է մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունից, ինչը նշանակում է նոտարի անզգուշության հետևանքով երրորդ անձին պատճառված վնասների փոխհատուցում:

Բացի այդ, բժիշկների կողմից մասնագիտական պատասխանատվության ապահովագրության կիրառումը լայն տարածում ունի ամբողջ աշխարհում, որը ծառայում է բուժական պրոցեդուրաների և կլինիկական փորձարկումների ընթացքում հիվանդին պատճառված վնասի փոխհատուցմանը:

Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն, որը ներառում է նաև գործատուի պատասխանատվության ապահովագրությունը աշխատողի կողմից աշխատավայրում ստացած վնասվածքների համար, ինչպես նաև երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրությունը (որը երբեմն կոչվում է ավոպատասխանատվության ապահովագրություն), որն օգնում է ապահովագրվողին այն դեպքում, եթե ավտոմեքենա վարելիս նրա մեղավորությամբ վնասվի երրորդ անձ կամ գույք:

Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ձևերից է նաև, այսպես կոչված, աճող վտանգի պատասխանատվության ապահովագրությունը (վտանգավոր ձեռնարկություններ), որը ծածկում է բարձր ռիսկային (օրինակ՝ միջուկային կամ քիմիական) ձեռնարկությունների կողմից երրորդ անձանց և շրջակա միջավայրին հասցրած վնասից առաջացած ծախսերը: Հաշվի առեք, որ ապահովագրված դեպքի առաջացման դեպքում ապահովագրական կազմակերպությունը բոլոր դեպքերում չէ, որ փոխհատուցում է վնասը: Ապահովագրության պայմաններն ունեն «բացառություններ», որտեղ նշված են, թե որ դեպքում ապահովագրական կազմակերպությունը չի փոխհատուցի վնասը: Նաև գումարը չի փոխհատուցվի, եթե վնասը կապված է ապօրինի արարքի հետ կամ երբ ապահովագրական կազմակերպությունը դիտավորյալ թյուր իմացության մեջ է գցվել: Օրինակ՝ ավտովթարի դեպքում ապահովագրական կազմակերպությունը չի ծածկի վնասը, եթե մեքենան վարել է ալկոհոլի կամ թմրամիջոցների ազդեցության տակ գտնվող անձը:

Հենց այս սահմանափակումներն են մեծացնում ապահովագրված անձի պատասխանատվությունը: Շատ չնախատեսված դեպքեր են պատահում կյանքի ընթացքում, ուստի կարևոր է, որ մարդիկ և ընկերությունները նախապես հոգ տանեն նման դեպքերի պատահման դեպքում ֆինանսական ռիսկերը նվազեցնելու կամ նույնիսկ վերացնելու մասին: Ապահովագրության համար գումար վճարելը շատերին տարօրինակ է թվում, քանի որ, ի տարբերություն ինչ-որ բան գնելու կամ պարտք վերցնելու, ապահովագրության իրական, շահավետ ազդեցությունը մենք տեսնում ենք ոչ թե ակնթարթորեն, այլ ապագայում՝ չնախատեսված և տհաճ հետևանքների առաջացման ժամանակ: Այնուամենայնիվ, այսօր շատ կարևոր է մտածել վաղվա օրվա մասին: Ապահովագրությունն իր հերթին կօգնի մեզ պաշտպանել ինքներս մեզ, մեր ընտանիքը, գործը/բիզնեսը և մասնագիտական գործունեությունը և հասնել ֆինանսական հանգստության և կայունության:

Մաղթում ենք ձեզ ֆինանսական հանգստություն: